բաղցր եղանակին, որով հարուստ է և ուրախ Զամախին։ Այս Ղըզլալայ բերդին, հրամանաւ պարսից թագաւորաց, միշտ իշխել են հայ մելիքներն Զամախուայ, որոց շառաւիղք և ժառանգ են Մելյսարեցի Վլասեանք, որք այսօր եւս իբրեւ ազնուական իշխում են բաւական կալուածոց, որոց ներկայացուցիչն է այսօր Զամախի քաղաքում պարոն Զահնշահ Վլասեանց։ Եւ այս շնորհը պարսից թագաւորք նորա համար են արել Վլասեանց մելիքներին, որ նրանցից մէկը Մելիք Վլասը մեծ օգնութիւն է արել պարսից շահին։ Այս բերդի բանաւոր բերդակալին սպանել է և բերդը և երկիրը ազատել է բանակալից և երկիրը յանձնել է շահին, իսկ շահը ընծայել է նրան այս բերդը և նորա շրջակայքը մինչեւ Մելյսարի գիւղը իւր սահմանօքն։ Բերդի գլխի շինութեանց վրայ ամենեւին չեն երեւում որպիսի և իցէ գրեր, և ոչ խաչագծեր, որ սովոր էին թէ մեր, թէ Աղուանից քրիստոնեայ նախնիքը նկարել, այլ մի գեղեցիկ կամարակապ շինուածոյ մէջ պատի երեսին մի քարի վրայ փորուած է մօտաւորապէս՝ 1621 այսպէս և միւս քարի վրայ O+OH— և 1821 թիւն։

Բերդի շինութիւնքն և նոյն իսկ բրգունքը ցոյց են տալի տեսողաց որ վաղուցուայ աւերակ են, գուցէ 5,6 հարիւր տարուց աւելի, մանաւանդ մանրաքարով շարուած լինելոյ պատճառաւ՝ շինութիւնքն՝ շուտ շուտ են քանդւում և աւերւում։

Բերդը յիրաւի ժամանակին անառիկ կարող էր լինել, թէ և գիմացը իւր բարձրութեան հաւասար կանգնած է Եղիա Մարգարէի սարը (Փաթրաքիւն) և շատ նման Բաղարանի և Բջնոյ բերդերին՝ շինուածովքն, գրիւքն և տարածութեամբն։ Վերջապէս նշանաւոր հնութիւն չկարացինք գտնել Վարսենիկի բերդի վրայ, երբ յուլիսի 1ին (1891) առատ քրտինք թափելով գնացինք տեսութեան ես, Վահան և Մակար քահանայքն Զամախուայ[1])։ Դարձեալ մեր Արմաւիրը չէն կենայ, որ 3,4 հա-

---

[1])Նոր—Դար օրագիր № 9 յունվար 17, 1895թ. գրէ, թէ "Երկու քարհաններ գտել են Ղըզ—Վալասի անունով սարի վրայ մի փութ հին գրամ (բիսաի), որոց վրայ գրուած է արապերէն՝ Լա Իլլահի Իլլալլահա. Մահամէդ բասուլլահա. 101. այն է "բացի միոյն Աստուծոյ չիք այլ Աստուած,